

## ՀԻՇՈՒՄ ԵՆՔ ԵՎ ԴԱՅԱՆՁՈՒՄ



Այս ժողովրդի ողբերգությունն աննախադաս իրադարձություն էր մարդկության պատմության մեջ: Ռազմական անհրաժեշտությամբ պատճառաբանված այդ միջոցառումը միայն պատրվակ էր, որպեսզի քողարկվեր ԳԱՐԻ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ՝ աշխարհաբար ու բարձր մշակույթի տեր մի ամբողջ ժողովրդի լրիվ ոչնչացումը: Հայերը մեռնում էին ամեն տեսակի երկրային և բոլոր ժամանակների մահերով:

ԱՐՄԻՆ ՎԱԳՆԵՐ

## ԸՆԳՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

### Ծրագրերի իրականացումը՝ որպես համագործակցության հեռանկար

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) պատվիրակությանը, որը գլխավորում էր ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան առաքելության ղեկավար Քարեն Յիլիարդը: Հանդիպման նպատակն էր՝ քննարկել ԱՄՆ ՄԶԳ կողմից Հայաստանում իրականացվող ծրագրերի ընթացքը և նախարարության հետ համագործակցության հեռանկարները:

Հանդիպման սկզբում տիկին Յիլիարդը տեղեկացրել է, որ գյուղատնտեսության բնագավառում իրականացվող երկկողմ ծրագրերը շարունակական բնույթ կկրեն: Այդ թվում, նա կարևորել է «Աջակցություն Հայաստանում գյուղատնտեսական համատարած հաշվառմանը», «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգաձման», «Հայաստանում մասնավոր խորհրդատվական ծառայությունների համակարգի զարգացում», «Մաքուր էներգիա և ջուր», ինչպես նաև՝ «Աջակցություն Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնին և Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնին» ծրագրերը, որոնց իրականացումը կնպաստի կոոպերատիվների ստեղծմանը, ձկնաբուծության ոլորտում օգտագործվող ջրի խնայողատար տեխնոլոգիաների կիրառմանը, ֆերմերների մարքեթինգային կարողությունների ուժեղացմանը, ինչպես նաև՝ գյուղատնտեսական բարձրակարգ կրթության ապահովմանը:

Այս ենթատեքստում տիկին Յիլիարդը տեղեկացրել է, որ առաջիկայում ամերիկյան կողմը նպատակադրված է ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ նախաձեռնել եվրոպական և ԵՏՄ շուկաների ուսումնասիրման նոր ռազմավարություն մշակելու աշխատանքները: «Մենք շատ ենք կարևորում ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից Հայաստանում իրականացվող ծրագրերը, քանի որ դրանք մեծապես նպաստում են մեր երկրում գյուղատնտեսության ոլորտի զարգացմանը», - նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

Տիկին Յիլիարդն, իր հերթին, վստահություն է հայտնել, որ միջազգային, այդ թվում նաև ամերիկյան կողմի ծրագրերը, նպաստում են Հայաստանի ագրարային ոլորտի զարգացմանը, ֆերմերների եկամուտների ավելացմանն ու համայնքների բարեկեցության բարձրացմանը: Հանդիպման ավարտին՝ զրուցակիցները վերահաստատել են պատրաստակամությունը՝ ընդլայնելու երկկողմ համագործակցությունն ու փոխգործակցությունը:

## ԴԱՇՏՈՆԱԿԱՆ

- Կառավարությունը ընդունել է Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրով՝ Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքների նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու որոշում: Ծրագիրն ունի համապետական կարևոր նշանակություն, քանի որ նպաստում է էներգետիկ անվտանգության և սպառողների էլեկտրամատակարարման հուսալիության բարձրացմանը: Օտարվող սեփականության դիմաց փոխհատուցումն իրականացվելու է բանկի տրամադրած վարկային միջոցների հաշվին:

- Գործադիրն իր նախկին որոշումներից մեկում կատարել է փոփոխություններ, որոնք համապատասխանեցվել են ՄԱԿ-ի՝ «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի նոր զարգացումների հետ կապված, ընդունված դրույթներին:

- «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխության հետևանքով որսված գայլերի համար տրվող պարգևավճարի 100 հազար դրամը փոխարինվել է 123 հազար 346 դրամով: Կառավարության նախկին որոշման փոփոխության նպատակն է՝ խրախուսել գայլերի թվաքանակի կարգավորումը, վերականգնել բնության մեջ խախտված էկոլոգիական հավասարակշռությունը, կանխարգելել ընտանի կենդանիներին և մարդկանց հասցվող վնասը:

- Կառավարությունը ոռոգման նպատակով Սևանա լճից 2015թ. ոռոգման շրջանում Սևան-Հրազդան ոռոգման-էներգետիկ համակարգով ջրի բաց թողնման չափաքանակը սահմանել է մինչև 170 մլն խոր. մետր:

- Կառավարության որոշմամբ, «Սևանի իշխան» ՓԲԸ կողմից իրականացվող ներդրումային ծրագրով, 2015 թ. ապրիլի 15-ից մինչև 2016 թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ, ներմուծվող 200 մլն դրամը գերազանցող արժեքով ապրանքների ԱԱՀ վճարման ժամկետը հետաձգվել է մինչև 2018 թ. ապրիլի 18-ը: «Սևանի իշխանի» վերամշակման գործարան կառուցելու համար ընկերությունը նախատեսում է շուրջ 3 մլրդ դրամի ներդրում կատարել: Ծրագրի իրականացմամբ կստեղծվի մոտ 150 աշխատատեղ:

- Նիստում հաստատվել է նաև՝ լուրջ ակնոց ցեց և կարտոֆիլի ցեց վնասատուների մոնիթորինգի իրականացման նպատակով պետական աջակցության ծրագիրը: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ վերոնշյալ վնասատուների մոնիթորինգը և դրանց դեմ պայքարի միջոցառումների իրականացման ճիշտ ժամկետը հնարավոր է պարզել միայն ֆերմոնային թակարդների օգտագործմամբ, որոնք կտեղադրվեն Արարատի և Արմավիրի մարզերում:

### Աջակցություն են ստանում սահմանամերձ բնակավայրերը

ՀՀ կառավարությունը որոշել է՝ 2015 թ. փետրվարի 2-ից մինչև 20-ը ընկած ժամանակահատվածում, Տավուշի մարզի 8 բնակավայրերի՝ գնդակծության հետևանքով պատճառված վնասները վերացնելու համար, ֆինանսական աջակցության տրամադրման նպատակով, Տավուշի մարզպետարանին հատկացնել ավելի քան 3.7 մլն դրամ:

Նվար ցանք՝ առավելագույն արդյունքներ	Էջ 3
Թունաբիմկատների անվտանգ կիրառում	Էջ 4
Մասնագետի խորհուրդ	Էջ 6

**ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ**

**Առողջ սնունդ դպրոցներում**

*Հանձնաժողովում ընդգրկել նաև գյուղատնտեսության նախարարության աշխատակցի*

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի (ՊՅԾ) նորանշանակ ներկայացուցիչ Պասկալ Միշոյին: Ընտրվելու և կապակցությամբ՝ նախարարը համոզմունք է հայտնել, որ նրա պաշտոնավարման ընթացքում վերջին տարիներին ձևավորված գործընկերային հարաբերությունները կշարունակեն ընդլայնվել ու զարգանալ, մասնավորապես՝ կազմակերպության կողմից իրականացվող «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի (2010-2016թթ.) շրջանակում:



«Կայուն դպրոցական սնունդ» ծրագրից, որի նպատակը՝ աշակերտներին ամենօրյա սննդարար սննդով ապահովումն ու երեխաների առողջական վիճակի բարելավումն է, ներկայումս օգտվում են ավելի քան 60 հազար աշակերտներ: «Այս ծրագիրը չափազանց կարևոր է մեր երկրի համար, հատկապես մարզային դպրոցների համար: Միաժամանակ մենք հետաքրքրված ենք, որպեսզի դպրոցական սնունդը պատրաստված լինի տեղական արտադրանքից, քանի որ այն առանձնանում է թե՛ համայն, թե՛ որակական հատկանիշներով», - նշել է նախարարը:

Տիկին Միշոն հույս է հայտնել, որ այս հարցում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը և Սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը ծրագրի իրականացման ընթացքում իրենց աջակցությունը կցուցաբերեն: Այս կապակցությամբ ՊՅԾ ներկայացուցիչն առաջարկել է դպրոցական սննդի միջգերատեսչական հանձնաժողովում ընդգրկել նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարության ներկայացուցիչին: Պատրաստակամություն հայտնելով օժանդակել «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի հաջող և արդյունավետ իրականացմանը՝ Սերգո Կարապետյանն առաջարկել է, հնարավորության դեպքում, ընդլայնել ծրագրի շրջանակները և ընդգրկել հանրապետության բոլոր մարզերը՝ առաջնահերթությունը տալով սահմանամերձ շրջաններին:

**ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ**

**Կենտրոնն ապահովում է տարեկան 30-40 տոկոս աճ**

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն այցելել է Արարատի մարզի Դարակերտ համայնքում գործող ՀՀ ԳԵ «Բանջարաբուսաբանության և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՊՈԱԿ կենտրոնի ընթացիկ աշխատանքներին ծանոթանալու նպատակով:

Դրական գնահատելով հատկապես վերջին տարիներին կենտրոնի գործունեությունը՝ նախարարն ընդգծել է, որ բանջարաբուսաբանության և տեխնիկական մշակաբույսերի տեղական տորտերի մշակության ուղղությամբ տարվող աշխատանքները տարեցտարի ավելի բարեհաջող են ընթանում, ինչի շնորհիվ սերմաբուծության ոլորտում տարեկան հաջողվում է ապահովել 30-40 տոկոս աճ: «Մեզ համար գերակա խնդիր է մնում մեր հանրապետությունում տեղական սերմաբուծության արտադրության ծավալների ավելացման հաշվին ավելացնել բանջարաբուսաբանության մշակաբույսերի տեղական տորտերի տարածումը», - նշել է նախարարը՝ հավելելով, որ այդ ուղղությամբ կենտրոնը սերտորեն համագործակցում է նաև մասնավոր հատվածի հետ:



Նախարարը հայտնել է, որ ընթացիկ տարվա աշնանը կենտրոնում հոսքային գծերի տեղադրման և աշխատանքի մեքենայացման շնորհիվ, հնարավոր կլինի առաջիկա տարիներին, գիտական կենտրոնի արտադրության հաշվին, տեղական տորտերի սերմերի նկատմամբ առկա պահանջարկի մոտ 80 տոկոսն ամբողջությամբ բավարարել: Տեղեկացնելով, որ բանջարաբուսաբանային մշակաբույսերից ներկայումս հանրապետությունում առավել մեծ պահանջարկ ունի հատկապես՝ լոլիկը, Սերգո Կարապետյանը նշել է, որ այս տարի նախատեսվում է 2500 հեկտարով ավելացնել լոլիկի ցանքատարածությունները:

Իր հերթին, գիտական կենտրոնի տնօրեն Գայանե Սարգսյանը նշել է, որ գյուղացիական տնտեսությունները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում տեղական տորտերի նկատմամբ, և համոզմունք է հայտնել, որ կենտրոնում արտադրվող սերմերն ամբողջությամբ կսպառվեն:

Կենտրոնի տնօրենը հավելել է, որ այսօր գիտական կենտրոնն ունի բանջարաբուսաբանային և տեխնիկական մշակաբույսերի 3620-ից ավելի տորտեր, այդ թվում՝ 40-ից ավել լոլիկի տորտեր, որոնցից առավել մեծ պահանջարկ ունեն «Անահիտ», «Արա», «Նոյ», «Հայաստանի հրաշք», «Երազ» և «Մուսա լեռ» լոլիկի տորտերը: Սերմերի պահանջարկն ու արտադրության ծավալները բավարարելու համար, գիտական կենտրոնը համագործակցում է նաև մասնավոր տնտեսությունների հետ: Բացի սերմարտադրությունից, գիտական կենտրոնն արդեն երրորդ տարին է, ինչ սածիլներ է աճեցնում, որոնք հետագայում իրացվում են հանրապետության բոլոր մարզերում:

**ԴԱՍԵՆՈՍ**

**Ֆիլոքսերայի կենսաբանական առանձնահատկությունները քննարկման փուլում**

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում, կազմակերպվել էր դասընթաց՝ ոլորտի պատասխանատուների համար՝ խաղողի ֆիլոքսերայի մոնիթորինգի և ժամանակակից պայքարի միջոցառումների վերաբերյալ: Դասընթացը կազմակերպվել էր ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության և ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից:

Դասընթացը վարում էր Հունգարիայի Պաննոնիա համալսարանի պրոֆեսոր Լասլո Կոչիշը: Մասնակիցների թվում էին՝ ՀՀ ԳԵ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակիցները, Արարատի և Արմավիրի մարզերի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի աշխատակիցներն ու տեսուչները, ոլորտի այլ պատասխանատուներ: Դասընթացի շրջանակում Լասլո Կոչիշը մասնավորապես անդրադարձել է խաղողի ֆիլոքսերայի կենսաբանական առանձնահատկություններին, ֆիլոքսերայով վարակվածության ռիսկերին և առաջարկել հարցերին:

Պարոն Կոչիշը խոսել է նաև խաղողի այգիներում ֆիլոքսերայի հայտնաբերման և վերջինիս կենսացիկլի տարբեր փուլերի առանձնայանքների ճանաչման խնդիրների շուրջ՝ մասնակիցներին ներկայացնելով նաև այս վնասատուի դեմ պայքարի այլ երկրների արդյունավետ փորձը:

Դասախոսությունն ուղեկցվում էր տեսանյութերի ցուցադրությամբ: Բանախոսը նաև տեխնիկական խորհրդատվություն է ներկայացրել ֆիլոքսերայով վարակված խաղողի այգիների կտառավարման և մոնիթորինգի վերաբերյալ:

Դասընթացի ավարտին՝ Լասլո Կոչիշը պատասխանել է ներկայից հետաքրքրող հարցերին:

**ԿՐԹԱԿԱՆ**

**Ագրոբիզնեսի ուսանողները հետաքրքրված են ցուցահանդեսով**

Երևան էքսպո կենտրոնում ապրիլի 21-23-ը կազմակերպված «Կրթություն և կարիերա» միջազգային մասնագիտացված ցուցահանդեսին Հայաստանի ազգային ագրարային համալսարանն այս անգամ ներկայացված էր Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի Ագրոբիզնեսի մագիստրոսական ծրագրով (MAB), ինչպես նաև Ի-Վի-Էն գիտու ակադեմիայով:



ՀՀ կրթության և գիտության նախարարության աջակցությամբ, Լոգոս Էքսպո կենտրոնի՝ արդեն 15-րդ անգամ կազմակերպած ցուցահանդեսին մասնակցում էին Հայաստանի և արտերկրի 79 կրթական կազմակերպություններ:

Ցուցահանդեսի հիմնական նպատակի իրականացման, այն է՝ դպրոցականներին ու ուսանողներին կրթական հնարավորություններին ծանոթացնելու և աշխատաշուկա - կրթական հաստատություն կապն ավելի գործնական հիմքերի վրա դնելու առումով, թե MAB-ը, և թե Գիտու ակադեմիան նոր խոսք են մեր կրթական իրականության մեջ: Ուստի բնական էր հետաքրքրությունը տարբեր տարիքի այցելուների շրջանում՝ դպրոցականներից մինչև ապագա ուսանողների տատիկ-պապիկներ:

Հատկապես ուրախալի էր Էքսպո-2015-ի տարածաշրջանից եկած դպրոցականների խմբի արտակարգ հետաքրքրությունը, ում, բնականաբար, ավելի էր հետաքրքրում մագիստրոսական ծրագրին նախորդող բակալավրիատի փուլը՝ Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնում:

Կարող էր, նույնիսկ, տպավորություն ստեղծվել, թե այցելուների թիվը, այնուամենայնիվ, նախորդ տարիների համեմատությամբ, ավելի պակաս էր: Գործընկերներից ոմանք դա բացատրում էին ցուցահանդեսի համար ոչ այնքան նպաստավոր ժամկետ ընտրելը, հաշվի առնելով Ցեղասպանության հարյուրամյակի անուխաղթա մասշտաբային նախապատրաստական աշխատանքները:

Այսուհանդերձ, Էքսպոն ծառայեց իր նպատակին և, մասնավորապես, ևս մեկ հարթակ դարձավ ՀԱԱՀ Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի միջազգային չափորոշիչներին համապատասխանող կրթական ծրագրերի հանրայնացման համար: Իսկ այդ հարցում այցելուներին պատրաստակամորեն ու հմտորեն օգնեցին ԱՌԿ-ի կրտսեր կուրսի ուսանողները՝ ՀԱԱՀ աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժնի վարիչ Լուսինե Մաացականյանի գլխավորությամբ:

**Սոս Ավետիսյան**  
Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնի հանրային կապերի մասնագետ

**ԱՌԱՋԱՏԱՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ**

**ԱՆՎԱՐ ՑԱՆՔ՝  
ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

Աշխարհի շատ երկրներում լայն տարածում ունի անվար ցանքի տեխնոլոգիան: Մշակության այս եղանակին անցած ֆերմերների փորձը ցույց է տալիս, որ նրանք ժամանակի ընթացքում ստանում են ավելի բարձր բերք, քան՝ հողը վարելու ավանդական եղանակ կիրառողները:

Այս եղանակով Հայաստանում մշակության աշխատանքներ են կատարում «Արմենիան Թեքնոլոջի գրուպի» (ԱԹԳ) հիմնադրամի Երևանյան գրասենյակի մասնագետները: «Անվար տեխնոլոգիայով մշակվող, չռոզվող հողատարածքներում, նույնիսկ երաշտ տարիներին, ձևավորվում են նորմալ դաշտեր, որոնք տալիս են կայուն բերք: Իսկ ռոզվող երկրագործության պայմաններում տնտեսվում է մեկ ռոզում: Առավելություններից մեկն էլ այն է, որ այս եղանակով մշակության ժամանակ հողատարում չի առաջանում», -ասում է գրասենյակի տնօրեն Գագիկ Մկրտչյանը: Ընթացիկ տարում այս եղանակով Արմավիրի մարզում ցանք է կատարվել 20, Շիրակում՝ 80 հեկտարի վրա: Ցանվել են ոչ միայն հացահատիկային, այլև կերային մշակաբույսեր՝ առվույտ, կորնզան և այլն: 2014 թ. Շիրակի և Արմավիրի մարզերում ցանվել է 116 հա հողատարածք, 1 հա-ից ստացվել է 6-6,5 տ բերք:

ԱԹԳ-ն այս եղանակով առաջին անգամ ցանքեր է կատարել դեռևս 2004 թ.-ին: Ֆերմերները վստա-



հում են այս եղանակին, քանի որ տեխնոլոգիական գործընթացների կրճատման արդյունքում (վար, կուլտիվացիա, հարթեցում), 1 հա-ից տնտեսվում է շուրջ 70 հազար դրամ: Կառուցողի ֆերմեր Հովհաննես Գաբրիելյանը առաջիններից էր, որ այս տեխնոլոգիան կիրառեց իր տնտեսությունում: Արդյունքներից գոհ է, քանի որ ավանդաբար բարձր բերք է ստանում: Միաժամանակ նա իր փորձը փոխանցել է նաև հարակից համայնքների ֆերմերային տնտեսություններին, որոնք նույնպես այս եղանակով արդեն երկար տարիներ ցանքեր են կատարում: Գագիկ Մկրտչյանի տեղեկացմամբ, առաջիկայում, մի շարք ԳԱՄԿ-երի հետ համատեղ, ֆերմերների համար կկազմակերպվեն ուսուցողական սեմինարներ՝ տեխնոլոգիային ավելի մանրակրկիտ ծանոթանալու համար:

«Աջակցության դեպքում ավելի մեծ ծավալներ կընդգրկենք, կհամալրենք նաև տեխնիկայի հավաքակալանը՝ նոր շարքացաններով և գյուղատնտեսական գործիքներով: Տեխնոլոգիայի առավելությունները ներկայացնելու համար կուզենայինք ստեղծել նաև ցուցադրական տնտեսություն», - հավելում է հիմնադրամի տնօրենը:

Նշենք նաև, որ այս եղանակով աշխարհում մշակվում է 95,5 մլն հա հողատարածք: Երկրագնդի հետագա տաքացումը բերելու է տափաստանային գոտու ընդլայնմանը և, ի վերջո, առաջացնելու է ջրային ռեսուրսների սակավություն: Կպահանջվի կիրառել հողօգտագործման այնպիսի եղանակ, որը կապահովի հողի մեջ կուտակված խոնավության արդյունավետ օգտագործումն ու տնտեսումը: Մշակության այս եղանակն, ըստ մասնագետների, հնարավորություն է ընձեռում պահպանել հողի կառուցվածքը, պայմաններ ստեղծել անձրևաորդերի և միկրոբակտերիաների գործունեության համար:

Նելլի Սահակյան

**ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻՆ ԸՆԴՈՒՍ**

**ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ**

Վերջերս փոփոխվել է ունեցել ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Ռոբերտ Մակարյանի, Հայաստանի պահածոների և հյութ արտադրողների միության նախագահ, «Արարատ» սննդի կոմբինատի գլխավոր տնօրեն Երվանդ Թարվերդյանի և Պոռչյանի կոնյակի գործարանի տնօրեն Արմեն Գասպարյանի համապետական մամուլի ասուլիսը, որի ընթացքում բանախոսներն անդրադարձել են հանրապետությունում ընթացիկ տարում մթերումների կազմակերպման հարցերին:

Փոխնախարարը մասնավորապես նշել է, որ այս տարի, դեռևս փետրվար ամսից սկսած, ՀՀ գյուղատնտեսության նախարարի հանձնարարությամբ, նախարարության պատասխանատուներն այցելություններ են կատարել վերամշակող ընկերություններ՝ տեղում ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով: արդեն այսօր կարելի է հավաստել, որ այս հարցում խնդիրներ չեն լինելու: «Մեր գյուղացիական տնտեսությունները կարող են վստահ լինել, որ իրենց արտադրանքը վերամշակող ընկերությունների կողմից ամբողջ ծավալով կմթերվի: Հատկապես լույսի մասով առկա է անսահմանափակ մթերումներ իրականացնելու հնարավորություն, խաղողի մթերումները նույնպես կիրականացվեն առանց խոչընդոտների», - նշել է Ռոբերտ Մակարյանը:

Փոխնախարարը հայտնել է, որ եթե անցյալ տարի մթերվել էր շուրջ 23 000 տոննա լույս, ապա այս տարի վերամշակողներն արդեն իսկ 60000 տոննայի պահանջարկ են ներկայացրել, պտուղ-բանջարեղենի մյուս տեսակների նկատմամբ ներկայացված պահանջարկը նույնպես, շուրջ 30-50 տոկոսով, գերազանցում է նախորդ



տարվա մթերումների ծավալների ցուցանիշը:

Իր հերթին, պահածոների և հյութ արտադրողների միության նախագահ, «Արարատ» սննդի կոմբինատի գլխավոր տնօրեն Երվանդ Թարվերդյանը հավելել է, որ իրենք, սովորաբար, մթերումների իրականացման հետ կապված խնդիրներ չեն ունենում, վճարումները կատարվում են ժամանակին, մյուս կողմից՝ գյուղացիները չեն կարողանում ապահովել իրենց կողմից ներկայացվող պահանջարկը: Նա, հորդորել է գյուղացիներին՝ ավելացնել ցանքատարածությունները, բարձրացնել բերքատվությունը՝ հավաստելով, որ իրենք պատրաստ են ամբողջությամբ մթերել առկա բերքաքանակը: Պոռչյանի կոնյակի գործարանի տնօրենը նույնպես ընդգծեց, որ իրենց ընկերության կողմից այս տարի ևս խաղողի մթերումների ծավալների նվազեցումներ չեն լինի:

**ԿՈՈՊԵՐԱՑԻԱ**

**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔՈՒՄ ՁԵՎԱՎՈՐՎԵԼ ԵՆ ՆՈՐ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐ**

ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից իրականացվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրում Գեղարքունիքի մարզից ընդգրկված է 20 համայնք:

Ծրագրի մարզային աջակցության թիմի համակարգող Խորեն Բաղայանի տեղեկացմամբ, մինչ օրս այդ համայնքներում կատարվել է ավելի քան 30 հազար հա արոտների ջրարբիացում, հատկացվել՝ 500 միավոր գյուղատեխնիկա՝ գործիքներով: Ընթացիկ տարում ծրագրում ընդգրկվելու հայտ են ներկայացրել մարզի՝ Վահան, Հայրավանք, Սարուխան, Վար-

դենիկ, Երանոս, Արծվանիստ, Վաղաշեն, Ծովասար, Այրք և Լճաշեն համայնքները: «Ծրագրի կարևորագույն պայմաններից մեկն էլ՝ համաֆինանսավորումն է, որի ապահովման դեպքում միայն հնարավոր կլինի այն կյանքի կոչել այս կամ այն համայնքում», - ասում է պրն. Բաղայանը: Նշված բոլոր համայնքներում էլ զարգացած է անասնապահությունը, ունեն բավարար չափով արոտավայրեր և խոտհարքներ, միաժամանակ զբաղվում են կերային մշակաբույսերի արտադրությամբ: Հիշյալ համայնքներում արդեն կայացել են հիմնադիր ժողովներ, որոնք ընթացքում ձևավորվել են արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվներ:

**ԿՐԹԱԿԱՆ**

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ՝ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ**



Գյուղատնտեսության աջակցության «Կանաչ արահետ» ՀՀ-ի ընթացիկ տարվա կարևորագույն ծրագրերից մեկը՝ «Ուսուցման կանաչ կենտրոնի» ստեղծումն է: ՀՀ-ի նախագահ Նուբե Սարուխանյանի տեղեկացմամբ, կենտրոնում ֆերմերները, գյուղատնտեսներն ու ոլորտի ուսանողները կստանան ոչ միայն տեսական, այլ նաև՝ գործնական գիտելիքներ: Այդ նպատակով ստեղծվում է ֆերմերային տնտեսության փոքր մոդելը:

Տնտեսությունը կունենա փորձնական ցանքատարածքներ, որտեղ, ուսումնասիրման նպատակով, կցանվեն բանջարաբուստանային մշակաբույսերի թե տեղական, և թե արտասահմանյան սորտեր: Ըստ տիկին Սարուխանյանի, կներդրվեն նաև արտասահմանյան առաջավոր տեխնոլոգիաներ, միաժամանակ կուսումնասիրվի միջազգային փորձը: «Արտասահմանյան տարբեր երկրների գյուղատնտեսական ԲՈՒՀ-երի ուսանողները հնարավորություն կունենան իրենց ուսումնական արակտիկան անցկացնել մեր կենտրոնում: Փորձի փոխանակման նպատակով, կկազմակերպվեն նաև մեր մասնագետների այցերն արտերկիր: Ես այն կարծիքին եմ, որ մենք ոչ միայն արտերկրի փորձի ներդրման, այլ նաև մեր փորձի փոխանցման հնարավորությունն ունենք: Հայաստանը նույնպես ունի համագործակցության ուշագրավ առաջարկներ, որոնք կարող են արժանաչ օտարերկրյա գործընկերների հետաքրքրությանը», - նշում է տիկին Սարուխանյանը: Ուսումնական կենտրոնի շինարարական աշխատանքներն արդեն սկսվել են և, ըստ նախատեսված ծրագրի, ավարտին կհասցվեն ընթացիկ տարում:

Նելլի Սահակյան

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ԱՆՎՏԱՆՔԻ ԿԻՐԱՌՈՒՄ

Անհետաձգելի միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են նախկին Խորհրդային Միության երկրներում թունաքիմիկատների՝ առողջության վրա ազդեցության ռիսկերի հիմնախնդրի լուծման համար

Նախկին Խորհրդային Միության շատ երկրներում, այդ թվում՝ նաև Հայաստանում, թունաքիմիկատները լուրջ սպառնալիք են առողջության համար: Հետխորհրդային վեց հանրապետություններում կատարված վերջին ուսումնասիրությունները բացահայտել են գյուղաբնակների շրջանում տարածում գտած այն գործելակերպը, որի պատճառով գյուղացիական ընտանիքները ենթարկվում են այդ վտանգավոր քիմիկատների ազդեցությանը: Ուսումնասիրությունների ժամանակ նկատի են առնվել տարբեր խմբերի, այդ թվում՝ կանանց, երեխաների և սեզոնային աշխատողների համար հնարավոր վտանգ ներկայացնող բոլոր գործոնները:

Օրերս Երևանում կայացած միջազգային հանդիպմանը ներկա էին մասնակից երկրների առանցքային ներկայացուցիչներ, այդ թվում՝ Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) ներկայացուցիչ օգնական Գայանե Նատյանը, «Հայ կանայք հանուն առողջության և առողջ ապրելակերպի» ՀԿ-ի տնօրեն Ելենա Մանվելյանը, PAN-UK-ի («Պեստիցիդների դեմ գործողությունների ցանց») ներկայացուցիչ Զեյթ Թիրելլը, ՖԱՕ-ի ներկայացուցիչ Օքսանա Պերմիտովան և այլք:

Ներկաներին ողջունել է ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար Գառնիկ Պետրոսյանը՝ նշելով, որ հանդիպման գերնպատակն է՝ թունաքիմիկատների կիրառման վերաբերյալ տեղեկատվությամբ և փորձով կիսվել գործընկերների հետ, քանի որ այն հնարավորություն է տալիս մասնակից երկրներին կողմնորոշվել, թե որքանով են եզրակացությունները կարևոր իրենց երկրներում:

Մասնակից երկրների ներկայացուցիչները կիսվել են ուսումնասիրությունների արդյունքներով, քննարկել իրատես գործողությունները, որոնք անհրաժեշտ են՝ ազգային և տարածաշրջանային մակարդակներում բացահայտված խնդիրները լուծելու համար: Մասնակիցների թվում էին նաև Ռոտերդամի կոնվենցիայի կողմից նշանակված ազգային մարմինները և վեց երկրների կառավարական այլ ներկայացուցիչներ, Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել են մի շարք խնդիրներ: Դրանցից են՝ թունաքիմիկատներ օգտագործող և դրանց հետ առնչվող մարդկանց կողմից համապատասխան պաշտպանիչ միջոցների ոչ պարտադիր օգտագործումը և թունաքիմիկատների վերափաթեթավորումը ոչ պատշաճ տարաներում: Գրանցվել են մի շարք թունավորման դեպքեր, երբ մարդիկ սխալմամբ խմել են թունաքի-

միկատ: «Մեզ լրջորեն անհանգստացնում է այն փաստը, որ Հայաստանի մի շարք գյուղական համայնքներում վերարտադրողական տարիքի կանայք ավելի ու ավելի շատ են ներգրավվում թունաքիմիկատների հետ կատարվող աշխատանքներում, որոնց ժամանակ չի բացառվում թունավորման վտանգը», - նշել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ նախագահ Ելենա Մանվելյանը:

Մոլդովայում և Ղրղզստանում իրականացված փորձաքննարկումները ցույց են տվել, որ թունաքիմիկատների հետ կատարվող աշխատանքներում ներգրավված երեխաների թիվն ավելի բարձր է, քան սպասվում էր: Անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք՝ պարզելու համար, թե ինչ չափով են երեխաները ենթարկվում թունաքիմիկատների ազդեցությանը և ինչպիսին է թունավորման ռիսկի աստիճանը: Բացի այդ, ոլորտը կարգավորող մարմինները կարիք ունեն հիմնախնդրի ծավալի և պատճառների մասին լրացուցիչ տեղեկատվության, ինչը կօգնի նրանց կայացնել առավել ողջամիտ որոշումներ:

«Ռոտերդամի կոնվենցիան նպաստում է այս անհրաժեշտ տեղեկատվության փոխանակմանը և աջակցում է կողմերին՝ ազգային գործողությունների ծրագրերի մշակման գործում: Բացի այդ, կոնվենցիան զարգացող երկրներին տալիս է իրավունք՝ բարձրաձայնելու խիստ վտանգավոր թունաքիմիկատների հետ կապված իրենց խնդիրները և դրանց վրա հրավիրելու համաշխարհային հանրության ուշադրությունը», - ասում է ՊԳԿ-ի Ռոտերդամի կոնվենցիայի քարտուղարության ավագ տեխնիկական տնօրեն և համակարգող Զրիստին Ֆուելը:

«Այս տարածաշրջանում մենք պարզել ենք, որ թունաքիմիկատների հետ կապված աշխատանքներում կիրառվող սխալ գործելակերպը շատ տարածված է, ինչով և բացատրվում է գյուղական ընտանիքների շրջանում թունաքիմիկատներով սուր թունավորումների առաջացումը: Հարկավոր են հրատապ միջոցներ՝ խնդիրն ավելի լավ հասկանալու և անվտանգության բարելավման հարցում իշխանություններին և գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվող ընտանիքներին աջակցելու համար, - հավելել է Միացյալ Թագավորության «Պեստիցիդների

դեմ գործողությունների ցանց»-ի աշխատակից Շելա Ուիլիսը, որը համակարգել է ուսումնասիրությունները:

«Ժամկետանց թունաքիմիկատների վերացման և դրանց առաջացման կանխարգելման նպատակով կարողությունների բարելավումը՝ որպես նախկին Խորհրդային Միության տարածքում չօգտագործված վտանգավոր քիմիկատների հիմնախնդրի լուծման օրինակ» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից և իրականացվում ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից՝ համագործակցելով Միացյալ Թագավորության «Պեստիցիդների դեմ գործողությունների ցանց» միջազգային ՀԿ-ի, Ռո-



տերդամի կոնվենցիայի քարտուղարության և Հայաստանում «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի հետ:

Հանդիպումը կազմակերպվել էր վերը նշված ծրագրի շրջանակում՝ Ռոտերդամի կոնվենցիայի քարտուղարության և «Պեստիցիդների դեմ գործողությունների ցանց»-ի կողմից: Այն վեց երկրներում՝ Հայաստանում, Բելառուսում, Վրաստանում, Ղրղզստանում, Մոլդովայում և Ուկրաինայում, մեկ տարվա ընթացքում, գործընկեր կազմակերպությունների իրականացրած աշխատանքների հանրագումարն է: Նշված ժամանակաշրջանում մասնակից երկրների գործընկեր կազմակերպություններն իրականացրել են ելակետային ուսումնասիրություններ՝ իրենց երկրներում տվյալների հավաքագրման նպատակով, որոնք վերաբերում են բարձր ռիսկային գործելակերպին և թունաքիմիկատների ազդեցությանը ենթարկվելու հավանական տարբերակներին: Տվյալներն օգտագործվում են խոցելի խմբերին ավելի լավ բնութագրելու, թունաքիմիկատների ազդեցությանը ենթարկվելու պատճառներն ու հանգամանքներն ավելի լավ հասկանալու, նաև թունաքիմիկատներով թունավորման դեպքերի մասին տեղեկատվություն հավաքելու համար:

Լիանա Շախնազարյան

ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաջողությամբ ավարտվեց ջրամատակարարման համակարգի բարելավման ծրագիրը

Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) «Մաքուր էներգիա և ջուր» ծրագրի, ՎիվաՍել-ՄՏՍ-ի և Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի համատեղ ջանքերով, Արմավիրի մարզի Արագածի գյուղում վերջերս տեղի է ունեցել ջրամատակարարման համակարգի բարելավմանն ուղղված ծրագրի ավարտական արարողությունը:

Միջոցառմանը մասնակցում էին ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղաիրամյանը, ԱՄՆ ՄԶԳ-ի հայաստանյան առաքելության տնօրեն Քարեն Հիլարդը, ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը, Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի

հիմնադիր Ռուբեն Խաչատրյանը և այլք:

Ողջունելով ներկաներին և կարևորելով համայնքում ջրամատակարարման համակարգի բարելավմանն ուղղված ծրագրի իրականացումը՝ մարզպետ Ա. Ղաիրամյանը շնորհակալություն է հայտնել ծրագրի պատասխանատուներին՝ վստահեցնելով, որ՝ Արագածի համայնքի համար կենսական նշանակություն ունեցող խնդրի լուծմամբ, մեծ աջակցություն է ցուցաբերվել արագավիցիներին:

Միջոցառման մասնակիցները շրջել են պոմպակայանով, ծանոթացել ջրամատակարարման համակարգին, որից հետո հանդիպել են ծրագրի շահառուների հետ՝ քննարկելով երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

Նոր ջրանցք համայնքում

Արմավիրի մարզի Լենուդի համայնքի այգիների զգալի մասն այսուհետ կջրվի նոր ջրանցքի շնորհիվ:

Ժամանակակից տեխնոլոգիայով կառուցված 510 մ. երկարությամբ ոռոգման համակարգի կարևորագույն այդ հատվածը ստեղծվել է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից իրականացվող և ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «Գործընկերություն հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագրի շրջանակում: Համայնքի ֆերմերներից Նորայր Կոստանյանը շեշտեց, որ նոր ջրանցքի գործարկմամբ կխնայվի զգալի քանակությամբ ջուր, ինչի շնորհիվ կավելանա ջրվող այգիների քանակը: Լենուդի համայնքի ղեկավար Գեղամ Ղազարյանի կարծիքով՝ նոր ջրանցքը հնարավորություն կտա ավելացնել բերքի քանակն ու հիմնել նոր այգիներ:

«USAID/PRP» ծրագիրը նմանատիպ



ծրագրեր իրականացրել է նաև Տավուշի մարզի Զորական, Պտղավան, Դեղձավան համայնքներում: Շուտով շահագործման կհանձնվեն նաև Տավուշի՝ Բերդավան, Կողբ, Դիտավան և Բերքաբեր համայնքների վերակառուցված ոռոգման համակարգերը:

Ս. Արոյան  
Արմավիրի ԳԱՄԿ

ԱՐԱԳԱՏՈՒՄ

ԲԱՐՁՐԱՑԵԼ Է ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ



Արագածոտնի մարզում մթերող կազմակերպությունների հզորություններն ավելացել են ավելի քան 20 %-ով: Մարզի տարածքում գործում են «Թամարա ֆրույթ», «Իշխան» ՍՊԸ, «Աշտարակ կաթ» ՓԲԸ, «Օշականի գինու գործարան» ԲԲԸ, Սասունի կի «Արմենիա վայն», Ոսկեվազի «Յայասի» գինու կոնյակի և Կոչի «Գոլն Գրեյվ Արմաս» ՍՊԸ, որոնք իրականացնում են գյուղատնտեսական մթերքների վերամշակում:

Նախորդ տարվա համեմատությամբ մարզում բարձրացել է գյուղատնտեսական հիմնական մթերքների ապրանքայնության մակարդակը: Այսպես,

օրինակ, անցած գյուղատնտեսական տարում, նախորդ տարվա համեմատությամբ, գյուղատնտեսական հիմնական մթերքների ապրանքայնության ամփոփ մակարդակը կազմել է 69,7 %՝ նախորդ տարվա 69,2 %-ի դիմաց: Խաղողագործության բնագավառում այն կազմել է 72,8, պտղաբուծության՝ 63,5, կարտոֆիլի արտադրության՝ 72,3, բանջարաբուստանային մշակաբույսերի գծով՝ 84,2 %: Ավելացել է նաև անասնապահական ծագման մթերքների ապրանքայնության մակարդակը: Այսպես, կաթիկը կազմել է 65,4, մսինը՝ 72,5, ձվինը՝ 57,4 %: Արտադրական հզորությունների ավելացմանը զուգընթաց, մեծացել է նաև մթերումների ծավալը: Մթերող կազմակերպություններին է հանձնվել 6900 տ խաղող՝ նախորդ տարվա 6600 տ դիմաց:

Մարզում նկատելի է նաև ջերմոցային տնտեսությունների ավելացման միտում: Մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության տվյալներով, ջերմոցային տնտեսություններ են գործում՝ Ոսկեվազ, Ագարակ, Աշտարակ և Օշական համայնքներում: Ջերմոցային տնտեսությունների ընդհանուր մակերեսը Արագածոտնում կազմում է 26900 քմ: Հիմնականում մշակում են վարունգ և լոլիկ: Վերջին շրջանում, ելնելով պահանջարկից, զարգանում են նաև ծաղկաջերմոցային տնտեսությունները: Ի համեմատ նախորդ տարվա, մարզում ավելացել են նաև մշակովի հողատարածքները: Վարելահողերի և բազմամյա տնկարկների ծավալը կազմել է 42804,4 հա՝ նախորդ տարվա 41818,3 հա-ի դիմաց: Վարչության տվյալներով, արձանագրվել է նաև ցանքատարածքների կառուցվածքի բարելավում:

«Ցանում են արդյունավետ, ավելի մեծ եկամուտ ապահովող մշակաբույսեր, հիմնականում՝ բանջարեղեն: Նկատելի է նաև բուստանային և տեխնիկական մշակաբույսերի, ինչպես նաև կարտոֆիլի տեսակարար կշռի ավելացում»,- նշում է վարչության պետ Յուրա Ազատյանը: Ըստ նրա՝ ավելացել են նաև խաղողի արտադրության ծավալները: Մարզին բնորոշ է նաև ոչ ավանդական մշակաբույսերի արտադրությունը, ինչի պահանջարկը մեր հանրապետությունում օրեցօր ավելանում է:

«Ցանում են արդյունավետ, ավելի մեծ եկամուտ ապահովող մշակաբույսեր, հիմնականում՝ բանջարեղեն: Նկատելի է նաև բուստանային և տեխնիկական մշակաբույսերի, ինչպես նաև կարտոֆիլի տեսակարար կշռի ավելացում»,- նշում է վարչության պետ Յուրա Ազատյանը: Ըստ նրա՝ ավելացել են նաև խաղողի արտադրության ծավալները: Մարզին բնորոշ է նաև ոչ ավանդական մշակաբույսերի արտադրությունը, ինչի պահանջարկը մեր հանրապետությունում օրեցօր ավելանում է:

«Ցանում են արդյունավետ, ավելի մեծ եկամուտ ապահովող մշակաբույսեր, հիմնականում՝ բանջարեղեն: Նկատելի է նաև բուստանային և տեխնիկական մշակաբույսերի, ինչպես նաև կարտոֆիլի տեսակարար կշռի ավելացում»,- նշում է վարչության պետ Յուրա Ազատյանը: Ըստ նրա՝ ավելացել են նաև խաղողի արտադրության ծավալները: Մարզին բնորոշ է նաև ոչ ավանդական մշակաբույսերի արտադրությունը, ինչի պահանջարկը մեր հանրապետությունում օրեցօր ավելանում է:

ԼՈՐԻ

ԱՆԱՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻԵՐ

ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» (ԾԻԳ) ՊՀ-ի կողմից իրականացվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում, անցած տարի Զարինջ և Շամուտ համայնքներում շահագործման են հանձնվել ջրարբիացման համակարգեր:

Շամուտում նաև իրականացվել է ջրընդունիչ կառույցների շինարարություն: Հաջողությամբ են ընթացել նաև տեխնիկայի նորացման աշխատանքները: Մարզի Դսեղ, Զարինջ և Ահնիձոր համայնքների «Արտոգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներին հատկացվել են 1-ական միավոր «Բելառուս MT3 82,1» մակնիշի տրակտորներ:

Ընթացիկ տարում, ծրագրի շրջանակներում, նախատեսված է մարզի Արջուտ, Ծաղկաբեր, Լեռնանցք, Մարգահովիտ և Մեծավան համայնքներում իրականացնել հեռագնա արոտների ջրարբիացման և յայլաներ տանող ճանապարհների մասնակի վերանորոգման և գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման աշխատանքներ: Ի դեպ, ծրագրի իրականացման արդյունքում, մարզում արձանագրվել է անասնազխաքանակի աճ: 2015թ. հունվարի 1-ի դրությամբ, կովերի գլխաքանակն աճել է 1,5, մանր եղջերավորներինը՝ 1,9, թռչուններինը՝ 8,8 %-ով: Չուգահեռաբար ավելացել են նաև անասնաբուծական ծագման մթերքների արտադրության ծավալները: Կաթի արտադրության ծավալը՝ 5,9, մսինը՝ 6,1, ձվինը՝ 5%-ով գերազանցում են նախորդ տարվա ցուցանիշները: Ի դեպ, ավելի քան 10 տոննայով գերազանցվել է նաև մեղրի արտադրության ծավալը:



Դեռևս 2012թ., ֆրանսիայի MRE-ի (Անասնաբուծության շրջանային տուն) կողմից Լոռու մարզ կատարած փորձագիտական այցի և Լոռու մարզպետի Պրովանս Ալպ Կոտ դը Ազուր փոխայցելության արդյունքում, հաստատվել է «Լոռու մարզում անասնաբուծության զարգացման համագործակցության» ծրագիրը, որի նպատակն է՝ մարզում, ոչխարաբուծության զարգացմանը զուգընթաց, բարձրացնել դրանց մթերատվությունը»,- նշում է մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գրիգոր Հակոբյանը: Նրա տեղեկացմամբ՝ ծրագիրն իրականացման առաջին փուլում է:

ՏԱՎՈՒՇ

ՏԱՎՈՒՇՈՒՄ ԿԱՎԵԼԱՆԱՆ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ

Մարտական գործողությունների հետևանքով, Տավուշի մարզում 25300,6 հա վարելահողերից չի մշակվում 7210,7 հա հողատարածք: Մարզի գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը կազմում են 110779,4 հա:

18090 հա փաստացի վարելահողերից, անցած գյուղատնտեսական տարում, ցանքի տակ է դրվել 15482 հա հողատարածք, այն 176 հեկտարով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը: Չարգացած խաղողագործություն և պտղաբուծություն ունեցող մարզում մթերումները հիմնականում կատարվում են Իջևանի գինու գործարանի, «Էլեգարդեն» և «Այրուժի միրգ» ՍՊԸ-ների, «Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ Բերդի մասնաճյուղի, «Երևանի շամպայն-գինիների գործարան» ԲԲԸ, Դեբեդավանի, Տավուշի և «Բերդավանի գինու գործարան» ԲԲԸ-ի կողմից: «ՀՀ-ում 2010-2014թթ.-ի ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման» ծրագրի շրջանակներում, անցած գյուղատնտեսական տարում, մարզի Արծվաբերդ և Բերդ համայնքներում հիմնվել են սերմնաբուծական տնտեսություններ (ընդհանուր տարածքը կազմում է 27 հա):

Մարզի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Վաղարշակ Սուքոյանի տեղեկացմամբ, թարմացվում է նաև մեքենատրակտորային հավաքակալանը:

«Բելառուսի Հանրապետությունից Հայաստան ներկրված «Բելառուս MT3-82,1» մակնիշի տրակտորներից, դրանց իրացումն իրականացնում է Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ հիմնադրամը և ՓՄՁ ներդրումներ ՈՒՎԿ-ն՝ լիզինգային եղանակով, 1-ական միավոր ձեռք է բերվել Բերդի, Բագրատաշենի գյուղապետարանների և Հինարի ու Բարեկամավանան համայնքների ֆերմերների կողմից»,- նշում է վարչության պետը: Ընթացիկ տարում, Վերին Կարմիր Աղբյուր համայնքին կտրամադրվի մեկ հատ հացահատիկահավաք կոմբայն: Ենթադրվում է, որ տեխնիկայի հավաքակալանի նորացումից հետո մարզում կավելանա մշակովի հողատարածքների ծավալը:

Մարզային լուրերը՝ Ն. Սահակյանի

ՈՉ ԱՎԱԴԱԿԱՆ

ԱՅԳԵՊԱՆ ՄԽՏՈՐԸ

Ինչպես գիտենք, այգեգործությունը և դրա զարգացումն ու մշակույթը վաղեմի պատմություն ունի և այն մարդկային հասարակության զարգացմանը զուգընթաց, անընդհատ բարելավվել է:

Տարեցտարի այգիներում նոր տորտեր են հայտնվում՝ իրենց յուրահատուկ պտղատվությամբ և կենսական առանձնահատկություններով: Երբ այգեգործական աշխարհը բնականոն հունով է ընթանում՝ լավ է, բուրդը՝ թե՛ այգեգործ, և թե՛ սպառողը ուրախանում և հպարտանում են: Լավ հողագործները մեկ-մեկ կարող են բնութագրել իրենց այգիներում աճող ամեն մի ծառ, թուփ, այնպես, ինչպես լավ հովիվը է բնութագրում հոտում եղած ամեն մի կենդանու:



Բույսերն էլ փայփայման կարիք ունեն: Հետևապես՝ ցանկացած հողագործ ձգտում է հաճույք և արդյունք ստանալ իր աշխատանքից ու վնաս չկրել: Ցավոք ոչ միշտ է մեր ցանկությունը կատարվում, քանի որ, շատ հաճախ, բնության արհավիրքները հանկարծակի են բերում մարդկանց, և նրանք իրենց անզոր ու միայնակ են զգում:

Հետևապես՝ վտանգը մշտապես աչքի առաջ ունենալով և այն կանխելու համար, բացի մեխանիկական, քիմիական և այլ ձևերից, որոնք բավականին ծախսատար են և պահանջում են ժամանակ, որոշ մասնագետների պնդմամբ, կա կրծողներին ոչնցացնելու մեկ այլ մատչելի, ոչ աշխատատար, ոչ շատ տարածված եղանակ: Խոսքը վերաբերում է սխտորին, սոխին և այլ ազգի բույսերին, որոնք կրծողների կողմից չեն «սիրվում», օժտված են վանող հատկությամբ:

Առաջարկվում են նմանատիպ բույսերից, հատկապես՝ սխտորը, սոխը, տնկել կամ ցանել ծառերի բների շրջակայքում՝ մոտ 0,5-1 մ շառավղով կամ ցանկության դեպքում՝ ամբողջ այգում: Հասունացումից հետո, մի քանի բույս կարելի է թողնել, որ սերմերը թափվեն ծառերի շրջակայքում, իսկ մնացած մասը հանել ու օգտագործել: Մի քանի տարվա ընթացքում կառաջանա բուսածածկ, որն ամբողջ այգին կամ տարածքը կպաշտպանի կրծողներից: Բուսածածկն իր ստորգետնյա արմատային ցանցով կկաստի նաև բույսերի արմատների պաշտպանությանը, ինչպես նաև կկանխի հողաբլրակների առաջացումը:

Ըստ մասնագետների՝ պայքարի այս միջոցը կիրառելի է փոքր ֆերմերային տնտեսությունների համար:

Պ. Ա. Ստեփանյան  
կենսաբանական  
գիտությունների թեկնածու.  
Ռ. Տ. Ավետիսյան  
ֆիզիկ-սյուրաբան

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԳ

ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ ՎԱՂ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԽՆԱՄՔԸ

Գյուղացիական տնտեսությունների առաջնահերթ խնդիրը, սեղմ ժամկետներում, վաղ գարնանային աշխարանքների անցկացումն է: Ագրոտեխնիկական միջոցառումների ճիշտ և որակով կիրառումն այն կարևորագույն գործոններից է, որը նպաստում է պտղաբեր ծառերի բնականոն աճին, զարգացմանն ու պտղաբերմանը: Վաղ գարնանը այգում կարևորագույն առաջին կարևորագործողություններից են՝ պտղաբեր ծառերի ձևավորումն ու էտր, որոնք պետք է անցկացվեն խնամքով, մեծ պարասխանաբույսերի և սորպերի կենսաբանական առանձնահատկություններն ու ծառերի հասակը: Երիտասարդ ծառերը ձևավորելիս, հիմնական խնդիրը՝ համահավաք, ամուր կմախքով, սահմանափակ քանակի կմախքային ճյուղերով (5-7 հար) սաղարթի ստեղծումն է: Երբեք չպետք է մոռանալ, որ սաղարթի ճիշտ ձևավորումը նպաստում է ծառերի վաղ պտղաբերմանն ու բարձր բերքաբերությանը: Մինչդեռ, երիտասարդ ծառերի ուժեղ էտր, մասնավորապես՝ ճյուղերի խորը կարճացումը, ձգձգում է պտղաբերող կազմավորումների առաջացումը, նաև 1-2 տարով՝ ծառերի ժամանակին բերքաբերության անցումը: Բերքաբերության սկզբնական շրջանում, երբ ծառերի աճն ուժեղ է, հարկ է 40-45 սմ-ից բարձր աճ ունեցող շվերը կարճացնել՝ 1/4-1/3-ի չափով, հեռացնել սաղարթը խորացնող, իրար վրա սրվեր գցող, թույլ և կախ ընկած ճյուղերը: Երբ աճը սկսում է ասփիճանաբար դանդաղել՝ հասնելով 30-35 սմ-ի, անհրաժեշտ է շվերի կարճացումը դադարեցնել և կիրառել միայն նոսրացում: Իսկ երբ աճեցողությունը դանդաղում է և 15-20 սմ-ից չի անցնում, նորից անհրաժեշտություն է զգացվում շվերն ու ճյուղերը կարճացնել՝ նպաստելով աճի ուժեղացմանն ու նոր ճյուղերի առաջացմանը:



Կապված ծառերի հասակի հետ, սաղարթը ձգվում է դեպի վեր, մերկանում են կմախքային ճյուղերը, կրճատվում ասիմիլացիոն և պտղաբերող մակերեսները, պտղաբերությունը հիմնականում կենտրոնանում է սաղարթի ծայրամասերում: Այս դեպքում արդեն պահանջվում է երիտասարդացնող էտ, որը լինում է թույլ, չափավոր և ապա՝ ուժեղ: Թույլ երիտասարդացնող էտի ժամանակ կմախքային և կիսակմախքային ճյուղերը պետք է կարճացնել 2-3 տարեկան, իսկ չափավոր երիտասարդացման ժամանակ՝ 4-6 տարեկան բնափայտի վրա: Երկարյուն, խորհուրդ չի տրվում պտղատու ծառերի ուժեղ երիտասարդացում, նպատակահարմար է ձերացած ծառերը քանդել և տնկել նորերը: Ծառերի երիտասարդացման ժամանակ պետք է մեծ ուշադրություն դարձնել նաև այգու հողի մշակության, պարարտացման և ոռոգման աշխատանքներին, հակառակ պարագայում՝ երիտասարդացնող էտը կհանգեցնի բացասական հետևանքների: Եթե դիտվում է տարբեր պտղատեսակների ծառերի ցրտահարվածություն, որի աստիճանի ճիշտ որոշումը դժվար է, այդ դեպքում ծառերի էտը պետք է կատարել բողբոջների բացվելուց և աճի սկսվելուց հետո, երբ լրիվ դրսևորվում են վնասվածության չափերը:

Վաղ գարնանը կարևորվում է պտղատու ծառերի սանիտարական էտը և բույսերի հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի միջոցառումները: Կատարվում են բնի, կմախքային ճյուղերի մաքրման աշխատանքներ՝ մետաղյա քերիչներով, այնուհետև սպիտակեցում՝ կրակաթի ջրային լուծույթով: Այգու հողի քեչի գալուց պես, պետք է սկսել միջշարքային և մերձբնային տարածությունների մշակությունը, ինչը նպաստում է ծառերի արմատների տարածման սահմաններում խոնավության կուտակմանն ու պահպանմանը, օդափոխության լավացմանը, մոլայխոտերի ոչնչացմանն ու հողի կեղևակալման վերացմանը: Եթե այգին աշնանը չի վարվել, ապա միջշարքային տարածություններում վարը հնգավորների մոտ կատարվում է 20-22 սմ, կորիզավորների մոտ՝ 16-18 սմ, իսկ ծառերի մերձբնային

տարածությունում՝ 10-12 սմ խորությամբ՝ չվնասելով արմատային համակարգին: Այգու հողի միջշարքային տարածությունների ճիշտ օգտագործումը և մշակվող բույսերի ճիշտ հաջորդականությունը զգալիորեն բարձրացնում են պտղատու ծառերի աճն ու պտղաբերությունը: Պտղատու այգիներում պետք է կիրառել հողի պահպանման այնպիսի համակարգեր, որոնք ոչ միայն կկասեցնեն բերրիության անկումը, այլև կնպաստեն դրա բարելավմանը: Սովորաբար, երիտասարդ այգիներում խորհուրդ է տրվում մշակել այնպիսի բուսատեսակներ, որոնք կնպաստեն հողի բերրիության բարելավմանն ու լրացուցիչ կեանքի ստացմանը: Պտղաբերող այգիներում հողը պահպանելու համար նպատակահարմար է կիրառել կանաչ պարարտացման, սև ցելի և արհեստական ճմակալման համակարգերի առավել արդյունավետ հերթականություն: Այստեղ կանաչ պարարտացումը պետք է լինի առաջնային, սև ցելը՝ երկրորդական, իսկ արհեստական ճմակալումը կրի պարբերական բնույթ:

Եթե այգին աշնանը չի պարարտացվել, ապա գարնանը, վարի և բաժակների փորի ժամանակ, երիտասարդ այգիների 1 հա-ին տրվում է 10-15 տ փտած կամ կիսաքայքայված գոմարը, միաժամանակ՝ ազոտական, ֆոսֆորական և կալիումական 45-60 կգ, իսկ պտղաբերող այգիներին՝ համապատասխանաբար՝ 15-20 տ գոմարը, 90-120 կգ հանքային պարարտանյութեր՝ ազոտ նյութի հաշվով: Ազոտական պարարտանյութերով սնուցումը կատարվում է հետևյալ չափաբաժիններով՝ երիտասարդ այգիներում՝ 1 հա-ին՝ 30-40 կգ, իսկ պտղաբերող այգիներում՝ 50-60 կգ՝ ազոտ նյութի հաշվով: Պարարտանյութերը հող են մտցվում 25-30 սմ խորությամբ, որի դեպքում արմատները կարողանում են անհրաժեշտ չափով օգտվել դրանից: Միաժամանակ զգալիորեն բարձրանում է պարարտացման և սնուցման արդյունավետությունը: Այգու պարարտացմանն ու հողի մշակությանը զուգընթաց, պարարտացում են ոռոգման ակոսներ և ձեռնամուխ լինում այգիների առատ ջրման, որը նպաստում է ծառերի օրգաններում ջրի և սննդանյութերի տեղաշարժի արագացմանը, վնասվածության հետևանքների վերացմանը, բերքի պահպանմանն ու պտուղների խոշորացմանը: Ծառերի ոռոգումից մեծապես կախված է նաև կայուն և բարձր բերքի ստացումը: Պտղատու ծառերը ջրի մեծ պահանջ են զգում, հատկապես՝ տերևների և շվերի առաջացման, բուռն աճի ու պտղալիցի, ինչպես նաև՝ պտղաբողբոջների հիմնադրման և ձևավորման ժամանակ: Խորհուրդ է տրվում առաջին ջուրը տալ վաղ գարնանը՝ մինչև բողբոջների բացվելը, երկրորդը՝ ծաղկաթափից, երրորդը՝ պտղաթափից անմիջապես հետո: Զրույների քանակը, ժամկետները, չափաբաժինները կախված են աճման միջավայրի պայմաններից, պտղատեսակների կենսաբանական առանձնահատկություններից, պատվաստակալից և ծառերի հասակից: Հանրապետությունում մշակվող հիմնական պտղատեսակների պահանջը ջրի նկատմամբ միատեսակ չէ, առավել պահանջկոտ են՝ սալորենին, տանձենին, խնձորենին, կեռասենին, ավելի քիչ՝ բալենին, դեղձենին, ծիրանենին և նշենին:

**Գագիկ Սանթրոսյան,**  
ՀԱԱՀ Ագրոնոմիական ֆակուլտետի դեկան,  
գյուղատնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

ԾԱՌԱՏՈՒՆԿ ՍՊԻՏԱԿՈՒՄ

ՀՀ Գյուղատնտեսության նախարարությունը, ցեղասպանության 100-րդ տարելիցի հետ կապված, հանդես էր եկել նախաձեռնությամբ, որի շրջանակներում «Հայաստան» ՊՈԱԿ-ի միջոցով, անհատույց բարձրարժեք ծառատեսակների տնկիներ էին տրամադրվել համայնքներին՝ հանրապետություն ամբողջ տարածքում ծառատունկ իրականացնելու նպատակով:



Վերջերս, Լոռու մարզպետի նախաձեռնությամբ և գյուղատնտեսության և բնապահպանության վարչության աջակցությամբ, Սպիտակ քաղաքի Սուրբ Հարություն եկեղեցու բակում տեղի ունեցավ նմանատիպ ծառատունկ: Տնկվեցին բազմաթիվ տնկիներ:

Ծառատունկի մասնակցում էին Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գրիգոր Հակոբյանը, Սպիտակի քաղաքապետ՝ Գագիկ Սահակյանը, Լոռու ՊՈԱԿ-ի տնօրեն Մանվել Գրիգորյանը, վարչության մասնագետներ, ՊՈԱԿ-ի և քաղաքապետարանի աշխատակիցներ ու պաշտոնատար այլ անձինք: Իրենց օգնությունն առաջարկեցին նաև Սուրբ Հարություն եկեղեցու հոգևոր հովիվ Հայր Ավետիքը, եկեղեցու սպասավորները և Սպիտակի քաղաքացիները: Մասնակիցները շանք ու եռանդ չխնայեցին՝ եկեղեցու հարակից տարածքը կանաչապատելու և բարեկարգելու համար: Ծառատունկի մասնակիցներից յուրաքանչյուրը՝ մեկ ծառ տնկելով, իր հարգանքի տուրքը մատուցեց Հայոց Մեծ Եղեռնի անմեղ զոհերի հիշատակին:

Կարինե Աղամյան  
Լոռու ՊՈԱԿ

ԽՐԱԽՈՒՍՎՈՒՄ ԵՆ ԳՈՐԾԱՐԱՐ ԿԱՆԱՅՔ

«Գյուղմթերքի արտադրության ոլորտի կին հերոս» Ծրագիրը և մրցանակաբաշխությունն իրականացվել են դեռևս 2012թ.՝ «Հայաստանի երիտասարդ կանանց առցից աշխատանքային» և ՕԵՄՖԱՄ-ի կողմից՝ վերջինիս «ԱՃԵՑՆԵՔ» (GROW) համաշխարհային քարոզարշավի շրջանակներում:

ՀԵՎԿ-ի տվյալներով, մինչ օրս, ՀՀ մարզերից գյուղմթերքի արտադրության ոլորտի կին հերոսի կոչման են արժանացել 20 կանայք: Ծրագրի շրջանակներում, խրախուսական մրցանակի են արժանացել գյուղատնտեսական սպառողական 6 կոոպերատիվներ, դրանց կից գործող կանանց 1 կոմիտե և գյուղմթերքի արտադրությամբ զբաղվող 16 կանայք: «Մրցանակաբաշխությունը միջոց է՝ բացահայտելու այն կանանց, ովքեր գործունեություն են ծավալում սննդի արտադրության (գյուղատնտեսություն, ֆերմերային տնտեսություն) ոլորտում, միաժամանակ խրախուսելու բնապահպանորեն մաքուր սնունդ արտադրող այն կանանց, ովքեր բացառիկ և օրինակելի ներդրում են կատարել իրենց ընտանիքների և համայնքների զարգացման ուղղությամբ», -ասում է ՀԵՎԿ-ի նախագահ Լիլիթ Ասատրյանը:

«Գյուղմթերքի արտադրության ոլորտի կին հերոս» մրցույթի նպատակն է՝ խրախուսել ՀՀ-ում գյուղատնտեսության և ֆերմերային տնտեսության ոլորտներում գործունեություն ծավալող և հաջողության հասած կանանց, ում հաջողվել է իրականացնել դրական փոփոխություններ և նպաստել տեղական համայնքի կայուն զարգացմանը: Ի դեպ, ՀԵՎԿ-ն իր 10 տարվա գործունեության ընթացքում, երևանում և ՀՀ մարզերում հիմնել է կանանց կողմից ղեկավարվող ավելի քան 20 փոքր ձեռնարկություն, ընտանեկան, ֆերմերային տնտեսություններ և արտադրամասեր:

Ն.Սահակյան

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԳ

# ՌԵԿՎՐՎԱՐԻԱ ՎՆԱՍԱՏՈՒՆ

## RECURVARIA NANELLA HB

Հայաստանի Հանրապետությունում մշակվող պտղատու այգիներին, հիվանդությունների հետ մեկտեղ, մեծ վնաս են հասցնում նաև վնասատուները: Վերջին ժամանակներս բավականին տարածում է գտել թեփուկաթևավորների ընտանիքին պատկանող՝ *Recurvaria nanella* HB (տերևալոր) վնասատուն: Վնասում է խնձորենուն և հատկապես՝ ծիրանենուն: Պայքարի միջոցառումների թեփուկաթևավորների իրականացման և երբեմն՝ բացակայության պարագայում, բերքի մեծ կորուստ է գրանցվում: Այդ իսկ պատճառով, անհրաժեշտ է ժամանակին բացահայտել և ինտեգրացված պայքար կազմակերպել վնասատուի դեմ:

ԿԵՆՏՐՈՆԻՆ



Նկ. 1 Ռեկուրվարիայի թրթուրը

Թրթուրը մոխրագույն է, թևերի բացվածքը՝ 9-11 մմ: Առջևի զույգ թևերը նեղ են, մոխրագույն և իրենց վրա կրում են երկու սև, նեղ, թեք շերտեր: Հետևի զույգ թևերը մոխրագույն են:

Ձուն դեղնավուն է, էլիպսաձև: Չվերից նոր դուրս եկած թրթուրը բաց դեղնավուն է, հասակավորը՝



Նկ. 2 Հարսնյակը

կանաչավուն: Հարսնյակը դարձնազույն է, շատ թույլ դեղնականաչավուն երանգով, փայլուն: Ձմեռում է թրթուր փուլում, սպիտակ մետաքսե բոժոժում, հարսնյակավորվում մայիսի վերջերին՝ ծառի ճյուղերի կիսապոկ կեղևների տակ: Թրթուրների թռիչքը սկսվում է հունիսի սկզբներին և ավարտվում նույն ամսվա վերջին: Չվաղորմ են տերևների ներքևի երեսին, ջղերի կողքին հատ-հատ: Չվաղորմից 12-13 օր հետո դուրս է գալիս թրթուրը և անմիջապես մտնում տերևի հյուսվածքի մեջ և սնվելով՝ առաջացնում նեղ, ոչ երկարավուն ական, որը հետագայում ստանում է բնորոշ ճյուղավորված ձև: Թրթուրներն ականված տերևները թողնում և ձմեռման են անցնում օգոստոսի վերջերից մինչև հոկտեմբերի վերջերը: Տարեկան տալիս է մեկ սերունդ:



Նկ. 3 Հատուկ

Ռեկուրվարիան վնասում է պտղատու ծառատեսակներին: Առանձնապես ուժեղ է վնասում ծիրանենուն և դեղձենուն:

**Վնասի ախտանիշները:** Վաղ գարնանը, ծառերի հյուսվածքաթուղթները սկսվելու հետ մեկտեղ, թրթուրները դուրս են գալիս թաքստոցներից, ծաղկակոթունի մոտ կրծելով՝ բաժակաթերթերը մտնում են ծաղկակոթունի մեջ՝ սնվելով առեքներով և վարսանդով: Սկզբնական շրջանում թրթուրները վնասում են ստորին ճյուղերի ծաղկակոթուններին, աստիճանաբար տեղափոխվում են ծառի վերին ճյուղերի վրա և սնվում կոկոնների պարունակությամբ: Վնասված ծաղկակոթունները չեն բացվում, և պտղագոյացում տեղի չի ունենում: Տերևաթողքների ուղեման շրջանում թրթուրները մտնում են դեռ չբացված տերևաթողքի մեջ և սնվում դրա պարունակությամբ: Հետագայում բացվող տերևների գագաթները ոստայնով միացնում են իրար և շարունակում սննդառությունը:

Վաղ գարնանը վնասատուի բացահայտման համար անհրաժեշտ է ուսումնասիրել ծիրանենու 2-4 տարեկան ճյուղերի կեղևի տակ և որոշ քանակությամբ էլ՝ թափված տերևների տակ, քանի որ թրթուրները ձմեռում են այդ վայրերում: Պետք է հաշվի առնել, որ ռեկուրվարիայի թրթուրները 10-15 օր վարում են թաքնված կյանք: Վնասատուին բացահայտելու համար անհրաժեշտ է բաժակաթերթերի վրա փնտրել թրթուրների կողմից բացված անցքերը, որոնք շրջապատված են լինում արտաթորանքով և ոստայնով:

### ՌԵԿՎՐՎԱՐԻԱՅԻ ԴԵՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ՄԵԹՈԴԸ ԵՎ ԲԱՐԱՆԻՉՆԵՐԸ

**Ազդեցիկության մեթոդ.** Գարնանը փորել ծառերի մերձքանային տարածությունները, որը նպաստում է հողում ձմեռող թրթուրների ոչնչացմանը: Ետի ժամանակ կտրել և այրել հիվանդ, չորացած ճյուղերը:

**Մեխանիկական մեթոդ.** Ծառերի բները, կմախքային ճյուղերի հիմքերը, ինչպես նաև 2-4 տարեկան ճյուղերը մաքրել չոր, կիսապոկ կեղևներից՝ բուր, մետաղյա քերիչներով, ապա խնամքով հավաքել սավանի վրա և այրել, իսկ ծառերի բները և կմախքային ճյուղերի հիմքերը սպիտակեցնել 20% կրակաթով: Հավաքել և այմուց հեռացնել թափված տերևներն ու բուսական այլ մնացորդները:

**Քիմիական պայքար:** Կախված տարածաշրջանի բնակլիմայական պայմաններից՝ գարնանը թրթուրների թաքստոցներից դուրս գալու շրջանում, դրանց դեմ պայքարել Կալիպտո 0,03% (3 մլ-10 լիտր ջրին), Դուրս-բան 0,2% (20 մլ-10 լիտր ջրին), Չոլոն 0,3% (30 մլ-10 լիտր ջրին), Մո-վեստո 0,15% (15 մլ-10 լիտր ջրին), Սալուս 0,3% (30 մլ-10 լիտր ջրին) պատրաստուկներով:

Արմենակ Տեր-Պրիգորյան,  
գյուղատնտեսական գիտությունների թեկնածու,  
Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարան

### Գենետիկորեն մոդիֆիկացված օրգանիզմներ

## ՀԱՇՏՎԵԼՈՒ ՀԻՄՔԵՐ ԿԱՆ

**Գենետիկորեն մոդիֆիկացված օրգանիզմների ասպարեզում 2 հակադարձ հոսանքների դինամիկ հավասարակշռում է տեղի ունենում, որն արդեն բացահայտում է այդ վիճահարույց ֆենոմենի հետագա զարգացման միտումները:**

Մի կողմից՝ հնարավոր աղետալի հետևանքները մարդկանց մոտ, եթե ոչ սարսափ, ապա լուրջ մտահոգություն են առաջացնում, և այս բանակի ողջամիտ մասնառաջարկում է գիտնականներին ավելի լուրջ մոտենալ տևական փորձարկումներին, քանի որ դրանք, այնուամենայնիվ, նաև լուրջ առավելություններ ունեն ավանդական մշակաբույսերի նկատմամբ (որոշ պայմանների բավարարման պարագայում, կարող են ապահովությամբ կիրառվել): Մյուս կողմից՝ շտապողականությանը ողջամտություն գերադասող գիտնականներն արդեն գնում են դրված պայմանների բավարարման ճանապարհով, որի արդյունքում՝ ԳՄ օրգանիզմները, որոշ նահանջից հետո, պատրաստվում են լուրջ գրոհի: Ինչպես կանխատեսում են բնագավառի հեղինակավոր մասնագետները, մոտակա 2 տասնամյակների ընթացքում գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի սերմերի 80 տոկոսը մոդիֆիկացված ձևով են հող մտնելու: Սոյայի հետ, որ զբաղեցնում է աշխարհում 83 մլն հա, այն արդեն տեղի է ունեցել: ամեն 5 հեկտարից 4-ը ցանվում է այդպիսի սերմերով: Եգիպտացորենն ու իլաժուկը 30-ական տոկոս ցուցանիշով, գրավում են 2-3-րդ տեղերը: Ընդհանուր առմամբ, ԳՄ մշակաբույսերը զբաղեցնում են երկրագնդի վրա 180 մլն հա տարածք: Վերջին 20 տարում դրանք աճել են 100-պատիկ:



ԳՄ մշակաբույսերի տարածման ոչ պակաս կռվան է հանդիսանում դրանք մշակող գյուղացու ստացած եկամուտը: ԱՄՆ-ում մեկ հեկտար մոդիֆիկացված եգիպտացորեն մշակող ֆերմերը ստանում է 1171 դոլար մաքուր եկամուտ, իսկ սոյա՝ 867 դոլար, այն դեպքում, երբ սովորական ցորեն մշակելիս, մաքուր եկամուտը չի գերազանցում 375 դոլարը:

Բայց սա դեռ չի նշանակում, որ ԳՄ սերմերին աշխարհով մեկ հաղթարշավ է սպասում: Ընդհակառակը, պարտադիր տևական դաշտային փորձարկումներին դեռ նախորդելու են բոլոր հնարավոր ռիսկերի մանրակրկիտ լաբորատոր դիտարկումներն ու գնահատումները: Բացի այդ, իրենց խոսքը դեռ պետք է ասեն երկրի պետական Էկոլոգիական փորձագիտությունը և սորոսի պետական ռեգիստրացիայի թափանցիկ գործելակարգը, որտեղ՝ բացի դաշտային փորձարկումներից, ներգրավված է կենսաբանական անվտանգության գնահատումը, որոնք միասին տևում են 4-5 տարի: Ծատ երկրներում դեռ

յին զարգացում և բարգավաճություն, ինչպես միշտ, անհրաժեշտ կլինեն և մեծ ներդրումներ:

Որպեսզի այս գործընթացները զարգանան ըստ ժամանակացույցի, պետք է որ երկիրը հնարավորինս ապահովված լինի անհրաժեշտ մշակաբույսերի ավանդական սերմատեսակներով և ստիպված չլինի դիմելու շուտափույթ չմտածված ծրագրերի, այն է՝ անհրաժեշտ սերմացուի չնախատեսված ներկրում և օգտագործում՝ առանց անհրաժեշտ պաշտպանական գործառնությունների կիրառման:

Ինչքան հեշտ է առանց երկար-բարակ մտածելու բացել դարպասներն ու գրկաբաց ընդունել հիմնական գյուղատնտեսական մշակաբույսերի ԳՄ սերմերը, նույնքան հեշտ է խուլ պատնեշ դնել դրանց առջև և ձևանալ, որ նման երևույթ աշխարհում ընդհանրապես գոյություն չունի, և նման խնդրի լուծման անհրաժեշտություն չկա: Իրականում խնդիրը բարդ է և դժվար լուծելի, բայց այդ լուծումն անհրաժեշտ է, որովհետև կերթի արդի գյուղատնտեսության շատ խնդիրների լուծմանը: Բացի բարձր բերքից և եկամտաբերությունից, այստեղ լուծվում է ոչ պակաս կարևոր՝ քիմիկատների կիրառման նվազեցման, այսինքն՝ նույն շրջապատի վրա բեռնվածության նվազեցման խնդիրը:

Վ Գ

### Ծրագիր ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

**Հետաքրքիր, հաճելի ու արդյունավետ է համագործակցել մի կազմակերպության հետ, որը մեծ հեղինակություն է վայելում Հայաստանում, հատկապես՝ այն համայնքներում ու շրջաններում, որտեղ աղքատության մակարդակը համեմատաբար բարձր է:**

Լոռու, Սյունիքի, Գեղարքունիքի մարզերում մենք ականատես եղանք տնտեսական զարգացման World Vision-ի («Վորլդ Վիժն Հայաստան» զարգացման և բարեգործական միջազգային կազմակերպություն) կողմից իրականացվող այնպիսի ծրագրերի, որոնց շնորհիվ համայնքներում ստեղծվում են ֆերմերային և կանանց խմբեր: World Vision-ի երիտասարդ, բայց արդեն իսկ շատ հմուտ աշխատակիցներն այս խմբերի կողքին են գյուղատնտեսական արտադրանքը հողից մինչև շուկա հասցնելու ողջ ընթացքում: Նրանց աջակցության շնորհիվ, ֆերմերային խմբերին հաջողվում է գյուղատնտեսությունը՝ հաճելի զբաղմունքից կամ նվազագույն ապրուստ վաստակելու միջոցից վերածել կայուն եկամտի աղբյուրի:

World Vision-ի կողմից ստեղծված խմբերն ստանում են շարունակական ուսուցում և ստացված գիտելիքները կիրառում իրենց իսկ տնտեսություններում: Խմբի անդամներն իրենց փորձն ու գիտելիքները կիսում են նաև համայնքի այլ շահագրգիռ բնակիչների հետ:

Վայրի ուտելի բույսերի և դեղաբույսերի, ոչ ավանդական մշակաբույսերի, հատապտուղների աճեցման մի շարք ծրագրեր են իրականացվել համայնքներում: «Կանաչ արահետ» այսուհետ պարբերաբար կանդադարանա այդ ծրագրերին:

«Կանաչ արահետ» ՀԿ

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

Հաջողության և հարստության ծաղիկ՝ Պիոն

Պիոնը (լատ.՝ paeonia) քաղաքագրիների ընտանիքի բազմամյա խոտաբույսերի ցեղին պարկանոց ծաղիկ է: Ծաղկի հայերեն համարժեքը քաղաքագրն է, որի հայրենիքը Չինաստանն է: Անվանման սրբեզման մասին կան բազմաթիվ վարկածներ, սակայն, ամենաշրջանավորները երկուսն են.

Ըստ պատմական աղբյուրների՝ պիոնը կոչվել է ի պատիվ Պատնիա կոչվող տեղանքի, որտեղ աճել է նրա տեսակներից ամենագեղեցիկը:

Ըստ հունական դիցաբանության՝ Պիոնը եղել է Էսկուլապիոսի տաղանդավոր աշակերտը, որը մի անգամ բուժել է անդրաշխարհի տիրակալին՝ Պլուտոնին, ում վիրավորել էր Հերկուլեսը: Իր աշակերտի կողմից Պլուտոնի գարմանահրաշ բուժումը նախանձ է առաջացնում բժշկապետի մոտ, և նա որոշում է սպանել Պիոնին, սակայն Պլուտոնը, իմանալով բժշկի չար մտադրության մասին, Պիոնին վերածում է մի շատ գեղեցիկ ու օգտակար հատկություններով լի դեղաբույսի՝ ի նշան երախտագիտության:

Հայտնի է քաղաքագրի մոտ 40 տեսակ. Հայաստանում՝ հիմնականում աճում է Սյունիքի մարզում: Աճում է թփուտներում և մա-

ցառուտներում: Ծաղկում է մայիսից մինչև հուլիսի կեսերն ընկած ժամանակահատվածում: Գրանցված է Կարմիր գրքում:

Քաղաքագրը սենյակային բույս չէ, և այդ պայմաններում: Այն սենյակային պայմաններում շատ հազվադեպ է աճում: Պիոնների գույներն ունեն իրենց հստակ բաժանումները: Սպիտակ պիոնները համարվում են դասական, և շատ հաճախ, նվիրում են հիմնականում մանկավարժներին: Վարդագույն պիոնները նվիրում են հիմնականում կանանց և աղջիկներին, իսկ մուգ կարմիր պիոնների են արժանանում ուժեղ, գործունյա կանայք, երբեմն՝ նույնիսկ տղամարդիկ:

Ծաղկի տարբերակիչ հատկություններն են՝ փարթամ թփերը, ծաղկի ճոխ շերտերն ու վառ գույնը: Յուրաքանչյուր այգեպան գիտի, որ դեկորատիվ բույսերի գրավչությունը կախված է սաղարթ թփերից, գույներից և ծաղկի չափերից: Պիոնի գրավչության գաղտնիքն իր փարթամ թփերի, հինգ և ավելի շերտեր ունեցող ծաղկի և ուռճացված կոկոնի մեջ է:

Ճապոնիայում այս ծաղիկն ամոթխածության, սիրո, հոգու ազնվության, հաջողության և բարեկեցության խորհրդանիշ է:

Իսկ Պակիստանում, Ցեյլոնում և Հնդկաստանում քաղաքագրը համարվում է հիմար հպարտության խորհրդանիշ: Երբեմն՝ նրանք պիոնին համեմատում են մեծամիտ, եսասեր ու հանդուգն մարդ-

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հին Հունաստանում այս ծաղիկը համարվել է երկարակեցության, ապաքինման, բժշկման խորհրդանիշ: Շնորհալի ու տա-



կանց հետ: Եվրոպայում ծաղիկների լեզվով պիոնը նշանակում է կրակոտ սեր:

ԱՄՆ-ի յուրաքանչյուր նահանգ ունի իրեն խորհրդանշող ծաղիկը: Ինդիանա նահանգի խորհրդանիշ ծաղիկը հենց պիոնն է:

ղանդաշատ հույն բժիշկներին անվանել են «պիոններ» կամ «պիոնականներ»: Հույները կարծում էին, որ պիոնն ունի հրաշալի բուժական հատկություններ և օգնում է հեղձուկի ժամանակ:

Պիոնն ունի մանրէասպան հատկություններ: Բուժում

է ստամոքսի խոցերը, նյարդային խնդիրները, հանգստացնում է հազը: Պիոնի տերևներից ստացված թուրմն օգտագործում են մազերի արմատներն ամրացնելու համար, սակայն պետք է իմանալ նաև, որ պիոնը թունավոր բույս է, ուստի մինչև դրա օգտագործումը, անհրաժեշտ է խորհրդակցել բժշկի հետ: Սրտի ցավերի դեպքում նույնպես քիչ քանակությամբ խմում են պիոնի թուրմ: Վերջերս ռուս գիտնականները պարզել են, որ այն նաև նվազեցնում է արյան մակարդեթիոնը և, նույնիսկ, ներծծում է թրոմբը: Ամենամեծ բացահայտումն այն է եղել, որ էպիլեպսիայով տառապողները, պիոնի արմատներից կամ սերմերից պատրաստված վզնոցներ կրելու դեպքում, էպիլեպսիայի նուպաների կրկնությունից կկարողանան խուսափել:

Պիոնը 17-րդ դարում Փարիզում բավականին թանկ ծաղիկ էր: Պարտիզանները սիրելիս անուշահոտ պիոն ձեռք բերելու համար վճարում էին հսկայական գումարներ:

Պիոնը Փարիզում օգտագործում են որպես թախաման՝ չար ուժերից և հիվանդություններից պաշտպանվելու համար և անվանում են հաջողության, բարեկեցության և ապահովության ծաղիկ:

Թարգմանությունը՝ Լիլիթ Գասպարյանի

Եղրևանու կամ ինչպես հաճախ ենք ասում, յասամանի հայրենիքը Բականյան թերակղզին է, սակայն բոլորն էլ շատ են սիրում այս ծաղիկը: Մի գեղեցիկ լեզենդ կա եղրևանու (սիրենի) մասին:



Գարնան դիցուհին ապրիլ ամսին գնում է արևին արթնացնելու՝ իր հետ վերցնելով նաև Իրիսին՝ ծիածանի դիցուհուն: Երբ հասնում են Սկանդինավյան երկրներ, որտեղ դեռ ցուրտ էր ու սառույց՝ գարնան դիցուհին այս երկրի համար ևս խնդրեց գեղեցիկ գույներ, բայց Իրիսը բաժանել էր բոլոր գույները և մնացել էին միայն մանուշակագույնի տարբեր երանգներն ու սպիտակը: Այս գույները նրանք շաղ են տալիս թփերի վրա, ու այսպես առաջանում է բոլորի համար շատ սիրելի ու քնքրված ծաղիկը:

Քչերը գիտեն նրա բուժական

ՅԱՍԱՄԱՆԻ ԲՈՒԺԻՉ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

նշանակության մասին: Դեռևս հնում եղրևանին օգտագործել են բժշկության մեջ: Որպես բուժամիջոց՝ օգտագործվում են բաց մանուշակագույնից մինչև մուգ մանուշակագույն տեսակները: Բուժական նպատակներով չեն օգտագործվում սպիտակ և հոտ չունեցող տեսակները: Ասում են լավն է այն տեսակը, որն ունի «երջանիկ հնգյակներ»:

Եղրևանուց պատրաստված պատրաստուկները՝ հատկապես ներքին ընդուն-

ման համար նշանակելիս, չպետք է մոռանալ նաև հակացուցումների մասին: Թեկուզ այն երբեմն օգտագործում են երիկամային որոշ բորբոքային հիվանդությունների ժամանակ, սակայն չի կարելի այն ընդունել երիկամային քրոնիկական անբավարարության դեպքում: Չի կարելի գործածել նաև փորկապության դեպքում: Եվ չպետք է մոռանալ, որ եղրևանու ծաղիկների մեծ քանակությունը թունավոր է, հետևաբար, ավելի լավ է օգտագործել բողբոջներն ու տերևները:

Եղրևանուց պատրաստված պատրաստուկներն ունեն քրտնա-

մուղ, ջերմ իջեցնող, հակաբորբոքային, ցավազրկող ու միզամուղ հատկություններ: Ժողովրդական բժշկության մեջ ծաղիկներից ստացված պատրաստուկներն օգտագործում են մալարիայի դեմ՝ որպես ցավազրկող միջոց: Ծաղիկների թուրմը կիրառում են նաև թոքաբորբի, վերին շնչուղիների կատարի դեպքում:

Եղրևանու սպիտակ ծաղիկների թուրմն օգտագործվում է ստամոքսի խոցի, հազի, լեղաքարային հիվանդությունների, իսկ 40 տոկոսանոց ռզեթուրմը՝ հոդերի աղային կուտակումների դեմ:

Ժողովրդական բժշկության մեջ տերևներն ընդգրկված են այն

բույսերի հավաքածուների կազմում, որոնցով բուժում են թոքերի տուբերկուլյոզը:

Ծաղկաթուրմ պատրաստելու համար անհրաժեշտ է 1 ճաշի գդալ ծաղիկները 1 ժամ թողնել 250 մլ եռացրած ջրում, ապա քամել և խմել 30-50 մլ՝ օրը 3-4 անգամ՝ բրոնխիտի դեպքում: Ծաղկաթուրմը կարելի է օգտագործել նաև կապույտ հազի և երիկամային որոշ հիվանդությունների ժամանակ:

Եղրևանու ծաղիկներից պատրաստված ռզեթուրմը շատ լավ միջոց է, օրինակ՝ աղերի կուտակման ժամանակ: Այն շատ օգտակար է կոշտացած կրունկ-

ներին: Դրա համար անհրաժեշտ է 1 ճաշի գդալ ծաղիկները 500 մլ օդու մեջ պահել 10 օր և քամել: Կարելի է թանգիֆե կտորը թրջել այս թուրմով և, աղերի կուտակման դեպքում, թրջոցներ դնել ցավոլ մասերին:

Հողացավերի դեպքում կարելի է նաև ծաղիկները լավ ձեծել, խառնել կարագի հետ և օգտագործել քսուքի ձևով՝ քսելով հողերին: Իսկ թաքում տերևները ձեծած վիճակում շատ օգտակար են վերքերի արագ ապաքինման համար: Կարելի է դրանք ձեծել, դնել վերքի վրա ու կապել:

Միգրենային ցավերի դեպքում օգտագործում են յասամանի տերևներից պատրաստված քսուքը:

Advertisement for Agronews 2015 subscription. It includes the logo 'ԱԳՐԱԼԵՐԱՌ' and 'AGRONEWS', the year '2015 թ. ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ', and a table of subscription rates for different regions. Below the table, it lists the names of the newspapers included in the subscription: 'Հայփոստ', 'Հայմամուլ', and 'Պրես-Արարատ'.

Footer information for Agronevs. It includes the logo 'ԱԳՐԱԼԵՐԱՌ' and 'AGRONEWS', the address 'Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80', the email 'E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am', and contact information for the publisher 'ՀԻՄՆԱԳԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ' and 'Լ. ՇԱՆՆԱՋԱՐՅԱՆ'.